ՍԵՖԵԱՆ ՊԵՏՈՒԹԵԱՆ ՄԷՋ ՀԱՅՈՒԹԵԱՆ ԿԵԱՆՔԸ ԿԱՐԳԱՒՈՐՈՂ ՇԱՐԻԱԹԱԿԱՆ ՕՐԷՆՔՆԵՐԸ ԺԷ.-ԺԸ. ԴԴ.

(Ըստ Մատենադարանի Ձեռագրերի)

ՔՐԻՍՏԻՆԷ ԿՈՍՏԻԿԵԱՆ
kkostikyan@yahoo.com

ՄՈՒՏՔ

Շիա իսլամը պետական կրօն հռչակած Սեֆեան Պետութեան տարածքում ապրող հայութեան իրաւունքներն ու պարտաւորութիւնները ձեւակերպուել ու արտացոլուել են այդ պետութիւնը կառավարող շահերի հրովարտակներում, որոնք յաճախ ներառում են իրաւական զանազան հարցերի շուրջ բարձրաստիճան հոգեւորականների վճիռները: Երեւանի Մեսրոպ Մաշտոցի Անուան Մատենադարանի (ՄՄ) կաթողիկոսական դիւանում են պահւում այդ հարցերի շուրջ հրապարակուած հրովարտակներից ու նաեւ շարիաթական նոտարական դատարանների փաստաթղթերից շատերը: Սոյն յօդուածի շրջանակներում փորձել ենք ՄՄ վերոյիշեալ պարսկերէն վաւերագրերի ու այլ աղբիւրների տուեալների համադրութեամբ հնարաւորինս հանգամանալից ներկայացնել Սեֆեան Պետութեանը հպատակ հայութեան իրաւունքներն ու պարտականութիւնները եւ դրանք սահմանող շարիաթական օրէնքները:

Ըստ շիա իսլամի սկզբունքների՝ օրէնքներ հաստատելու իրաւունքն Աստծունն է, որը դա կատարել է Մուհամմադ մարգարէի ու նաեւ իմամների միջոցով: Աստծոյ խօսքը մարդկանց է փոխանցուել Ղուրանի եւ Մուհամմատ մարգարէի ու շիա իմամների ասոյթներն ու նրանց մասին աւանդապատումները բովանդակող *հադիս*ների միջոցով, որոնք համարւում են շիա իրաւագիտութեան օրէնքների աղբիւրները:

Այդ աղբիւրներից են մահմեդական իրաւագէտները բխեցնում (تفريع و تشريع) իրենց որոշումները իրաւական զանազան հարցերի ու խնդիրների մասին[1]: Հետեւաբար, պատահական չէ, որ շիա երկրի հայութեան իրաւունքների հիմնական մասը յենւում է դեռեւ Մուհամմատ մարգարէի ու շիա իմամների հետ կապուող պատմական իրողութիւնների ու նրանց տեսակէտների վրայ:

Շիա իսլամը պետական կրօն հռչակած Սեֆեան Պետութեան տարածքում ապրող այլակրօնները ունէին *զիմմի*ի կարգավիճակ: Այդ կարգավիճակը ձեւաւորուել է Մուհամմատ մարգարէի օրօք՝ նուաճուող այլադաւանների հետ կնքուած պայմանագրերի հիման վրայ, որոնք հենց այդպէս էլ կոչւում են. պարսկերէն «*աղդ-է զեմմէ* – عقد ذمه» եւ արաբերէն՝ «*ակդ ուլ-զիմմա* - عقد الذمه»: «*ակդ* - عقد» բառը նշանակում է պայմանագիր, իսկ «*ահլ-է զեմմէ*- اهل ذمه» կամ «*զիմմի* - ذمی» կոչւում էին այն այլակրօնները (հրեա-

ները, քրիստոնեաները եւ այլ հաւատի հետեւորդները), որոնք ընդունելով *զիմմի*ութեան պայմանները, ապրում էին իսլամական երկրում: *Ջիզիայ*ի վճարմամբ պայմանաւորուած *զիմմի* կարգավիճակը ամրագրուած է Ղուրանի Թուբէ սուրայի 29րդ *այաթ ալ-ջիզիայ*ում նշուող *զիմմի*ական պայմանագրերով: Մահմեդական *ֆաքիհ*ները *աղդ-է զեմմէ*ն մեկնաբանելիս նշում են, որ այլակրօններից ոմանք *ջիզիա* վճարելու եւ իսլամի օրէնքներին ենթարկուելու պայմանով կարող են մահմեդական երկրում բնակուել ու հետեւաբար նրանք մշտապէս գտնւում են իսլամական պետութեան պաշտպանութեան տակ[2]: *Աղդ-է զեմմէ*ն գործածութեան մէջ է դրուել հիջրայի 9 թուականին (630/1) Մեքքայի գրաւումից յետոյ: Նրա կնքման նպատակը, ըստ իսլամական իրաւագէտների, նիւթական օգուտը չէր, որ ստացուելու էր *ջիզիայ*ի գանձումից, այլ՝ *զիմմի*ներին մահմեդականների դէմ պատերազմից ետ պահելը, նրանց բնակութիւնը մահմեդական երկրում ապահովելը, իսլամի օրէնքներին ծանօթացնելն ու իսլամին հակելը[3]:

Իրանում Սեֆեան ժամանակաշրջանում *զիմմի*ական պայմանագրերի նոր օրինակներ են ստեղծւում՝ յարմարեցուելով այդ պետութեան ու շիա իսլամի պայմաններին: Այդ պայմանագրերի գերակշիռ մասը կա՛մ տրուած են Իմամ Ալիի անունից[4], կա՛մ հաստատուած նրա, կա՛մ մէկ այլ շիա իմամի կողմից[5]: Օրինակ, 1694ին ընդօրինակուած մի վաւերագրի լուսանցքում, նրան է՛լ աւելի մեծ ուժ հաղորդելու նպատակով նշում է, որ պատճէնի համապատասխանութիւնը բնօրինակին՝ հաստատուած է շէյխ Սեֆիի (1252-1334)[6]՝ Սեֆեան Հարստութեան անուանադիր նախնիի կողմից[7]:

Սեֆեան Պետութեան թէ՛ կենտրոնական նահանգները տեղափոխուած, թէ՛ նրա սահմանային շրջաններում բնակուող հայութեան համար կենսական նշանակութիւն ունէր իր՝ որպէս *զիմմի* կարգավիճակին համապատասխանող իրաւունքների յստակեցումն ու պաշտպանութիւնը, որը կատարւում էր դրանց առանձին խնդիրների կապակցութեամբ հրապարակուած հրամանագրերի ու կրօնական բարձրաստիճան հոգեւորականութեան եւ նրանց գլխաւորած բարձրագոյն ատեանների կայացրած վճիռների (*ֆաթուա* ու *միսալ*) հիման վրայ:

ԺԷ. դարում Սեֆեան Պետութիւնում հրապարակւում են մեծ թուով նման փաստաթղթեր (ի տարբերութիւն այլ ժամանակաշրջանների): ՄՄ պարսկերէն վաւերագրերի հաւաքածուի մէջ կան շուրջ 50 *ֆաթուա*ներ՝ տրուած ինչպէս հոգեւորական գերագոյն ատեանի՝ *դիւան ալ-սադարաթ*ի[8], այնպէս էլ տեղական (Թաւրիզի, Նախիջեւանի ու Երեւանի) *շարʼի*[9] ատեաններում հայ քրիստոնեաների, որպէս *զիմմի*ների, իրաւական զանազան հարցերի կապակցութեամբ, որոնք շահի կամ տեղի կառավարչի կողմից հրամանագրով հաստատուելուց եւ համապատասխան ատեաններում գրանցուելուց յետոյ օրէնքի ուժ էին ստացել:

Յակոբ Ջուղայեցի կաթողիկոսը մահմեդական հոգեւորականների բարձրագոյն ատեանից ձեռք է բերել մեծ թուով *ֆաթուա*ներ, որոնց մի

մասի համար 1668ի գարնանը նա կաթողիկոսական *փիշքէշ*ով[10] ու առատ նուէրներով Սպահան է գնում[11]: Այս կարգի փաստաթղթերի առատութիւնը տուեալ ժամանակաշրջանում կապուած էր նաեւ Իրանի պատմութեան այդ ժամանակահատուածի որոշ իրողութիւնների հետ:

Սուլէյման (1666-94) եւ Սուլթան Հուսէյն (1694–1722) շահերի իշխանութեան տարիներին, Սեֆեան Պետութեան քաղաքական թուլացմանը զուգընթաց ուժեղանում է մահմեդական հոգեւորականութեան դերն ու ազդեցութիւնը երկրի կեանքում: Այդ ժամանակ Իրանում կրօնական գործերը տնօրինում էր Մոհամմադ Բաղէր Մաջլէսին (1627-99)[12], որը շահ Սուլէյմանի օրօք *շէյխ-ուլ-իսլամն*[13] էր, իսկ շահ Սուլթան Հուսէյնի իշխանութեան տարիներին հասնելով իր փառքի գագաթնակէտին՝ ստանում է նոր ու ամենաբարձր հոգեւորականի՝ *մոլլաբաշի*ի[14] պաշտօնը[15]: Իր մահից յետոյ *մոլլաբաշի*ի պաշտօնն անցնում է նրա թոռանը՝ Մոհամմադ Հուսէյնին[16]: Մաջլէսին մեծ ազդեցութիւն ունէր վերոյիշեալ շահերի վրայ եւ նրանց հրապարակած հրովարտակները յաճախ յիշեալ հոգեւորականի կամքի դրսեւորումներն էին[17]: Այս պատճառով Սեֆեան վերջին շահերի իշխանութեան տարիներին ուժեղանում են հալածանքները այլադաւան փոքրամասնութիւնների, այդ թւում՝ քրիստոնեայ հայերի դէմ[18]: Սուլթան Հուսէյնի ժամանակաշրջանը բնութագրելիս նորջուղայեցի պատմագիր Ստեփանոս Երէցը (1746-1813) նշում է, որ հայութեան հանդէպ անհանդուրժողութեան արտայայտութիւններից էր այն, որ անձրեւ օրերին քրիստոնեաներին թոյլ չէր տրւում գնալ քաղաք, շուկայ, փողոց[19]: Հայութեան մի շարք հոգեւոր առաջնորդներ ձերբակալւում են, Նոր Ջուղայի հայոց եկեղեցին սկսում է տարեկան որոշ գումար վճարել պետութեանը[20], ծանր (30 թումանի) հարկ է դրւում Հազարջրիբի Ս. Աստուածածին վանքի վրայ, որի հետեւանքով վանքի հոգեւորականներն հեռանում են[21], մահմեդական կրօնական առաջնորդների հրահրմամբ Սուլթան Հուսէյնը անարդար հրովարտակներ է հրապարակում կրօնական փոքրամասնութիւնների մասին[22], յաճախակի են դառնում բռնի մահմեդականացման դէպքերը: Սա արիւնահեղութիւնների ու անհանգստութիւնների պատճառ է դառնում[23]:

ՋԻՋԻԱՆ ՍԵՖԵԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՈՒՄ

Իրանահպատակ հայերի տարբեր խնդիրների կապակցութեամբ մահմեդական աստուածաբանների ու իրաւագէտների (*ուլամա*ներ ու *ֆաքիհ*ներ) եւ *դիւան ալ-սադարաթ*ի կայացրած *ֆաթուա*ներում եւ *միսալ*ներում մշտապէս առկայ է այն դրոյթը, որ խնդրարկուները «*զիմմի են եւ կատարում են իրենց զիմմիական պարտականութիւնները՝ ըստ ամենալուսաւոր շարի օրէնքների ջիզիա*[24] *վճարելով*»: Այսպիսով, «ջիզիա վճարող զիմմի» լինելը պարտադիր պայման էր մահմեդական դատական ատեանների որոշումներից ու *զիմմի*ների տրուած իրաւունքներից օգտուելու համար, որը ամրագրուած էր Ղուրանի վերոնշեալ սուրայում:

Սեֆեան ժամանակաշրջանում իրաքանչիւր գիւղից գանձուող *ջիզիան* հաշուած էր եւ ընդհանուր գումարով հարկային մատեաններում գրանցուած տուեալ գիւղական համայնքի անունով[25]: Շահ Աբբաս Ա.ի օրօք (1588-1629) հայերի հարկային բեռը բաւական թեթեւ էր, սակայն ԺԷ. դարի ընթացքում նրանցից գանձուող *ջիզիան* աճում է[26]: 1637ին Իրան այցելած գերմանացի ուղեգիր Ադամ Օլիարիուսի վկայութեամբ՝ Իրանում բնակուող շուրջ 100,000 հայեր վճարում էին 2 ռայխսթալէրին համարժէք գլխահարկ: Նշանաւոր արեւելագէտ Վ. Մինորսկին համարում է, որ կշռով մէկ ռայխսթալէրը համարժէք էր 4 աբբասիի կամ 4/50 թումանի[27]: Եթէ հաշուի առնենք, որ մէկ աբբասին ԺԷ. դարում հաւասար էր 200 դինարի, ապա *ջիզիայի* գումարը կազմում էր 1600 դինար: Ըստ Զաքարիա Ագուլեցու՝ Ագուլիսի գլխահարկը 1666ին նշանակւում է 2500 դինար[28]: ԺԷ. դարի երկրորդ կէսում ըստ որոշ տուեալների[29] իրաքանչիւր չափահաս հայ տղամարդուց գանձուող *ջիզիան* կազմում էր մէկ *միսղալ* (4,69 գրամ) ոսկի[30], նոյնքան էր նաեւ զրադաշտականներից[31] եւ հրեաներից[32] գանձուող *ջիզիայի* չափը:

ԺԷ. դարի երկրորդ կէսին հրապարակուած *ֆաթուա*ներից միքանիսում քննւում ու լուծում էին ստանում *ջիզիայի* վճարմանը վերաբերող միքանի հարցեր, ինչպէս օրինակ այն, որ *զիմմին* պարտաւոր էր *ջիզիա* վճարել նաեւ իր *զիմմի* ծառայի համար եւ պարտաւոր չէր այն վճարել իր այլակրօն ծառայի համար, որը *զիմմի* չէր[33]. նաեւ՝ որ *ջիզիա* չպէտք է պահանջեն Իրանի տարբեր շրջաններում շրջող հայ վաճառականներից[34]: 1668ին եւ 1669ին հրապարակուած այս *ֆաթուա*ներից երեւում է, որ տարածուած երեւոյթ է եղել այն, որ երբ հայերը առեւտրական կամ այլ նպատակներով մի տեղից մի այլ տեղ էին գնում, այնտեղ նրանցից պահանջում էին կրկին *ջիզիա* վճարել, հակառակ դէպքում ստիպում էին հաւատափոխ լինել: Ուստի Յակոբ կաթողիկոսը հարկադրուած է եղել շեշտել տալ, որ «*համաձայն գոյութիւն ունեցող օրէնքների, հայ ոայաթները ջիզիան վճարում են միայն իրենց հիմնական բնակութեան վայրում, մէկ անգամ, եւ արգելւում է այլ վայրերում ճամփորդելիս նրանցից ջիզիա պահանջելը*»[35]: Սակայն չնայած դրան, նոյն *ֆաթուա*ների բովանդակութիւնից պարզւում է, որ հեռաւոր վայրերում շատ հայ վաճառականներ ստիպուած են եղել առերես հաւատափոխ լինել եւ վերադառնալով իրենց բնակավայրը վերստին մկրտուել, որն իր հերթին տեղի մահմեդական հոգեւորականութեանը առիթ է տուել նոր հետապնդումների[36]:

Սկսած ԺԵ. դարից *ջիզիա* եզրոյթին զուգահեռ փաստաթղթերում հանդիպում է նաեւ *թաֆաւութ-է ջիզիա* (تفاوت جزیه) հարկատեսակը, որի չափը միքանի տարին մէկ թարմացւում էր ընդհանուր մարդահամարից յետոյ[37]: *Թաֆաւութ-է ջիզիան*, որ բառացի՝ «ջիզիայի տարբերութիւն» էր նշանակում, հայերից գանձուող գլխահարկի կամ *ջիզիայի* վրայ ժամանակի ընթացքում բարդուած գումարն էր, որ հարկային մատեաններում գրանցում

եւ հաշւում էր առանձին՝ դիտուելով որպէս առանձին պարտաւորութիւն[38]: Ընդ որում *թաֆաւութ-է ջիզիայի* գումարը ուղղակի կապ ունէր դրամի արժեզրկման հետ: *Ջիզիան* ու *թաֆաւութ-է ջիզիան* կարեւոր տեղ էին զբաղեցնում Սեֆեան Պետութեան ամավարկում. նրանց գումարը երբեմն կազմում էր որոշ գիւղերից հաւաքուող հարկագումարի կէսից աւելին[39]:

ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՈՒ ՆՈՐՈԳՄԱՆ ԻՐԱՒՈՒՆՔԸ

Շահ Աբբաս Ա.ի ժամանակաշրջանը բնութագրելով՝ Առաքել Դաւրիժեցին նշում է. «*[շահ Աբբաս Ա.ը] յօժար կամօք հրամայեաց եկեղեցիս շինել յամենայն տեղիս, եւ Ջուղայ եւ ի գեղօրայս մեծանիստ ու բարձրաշէն..*»[40]:

Իրօք, շահ Աբբաս Ա.ի իշխանութեան տարիներին Իրանի տարածքում կառուցւում են մեծ թուով հայ առաքելական ու կաթոլիկ եկեղեցիներ: Սա աննախադէպ երեւոյթ էր մահմեդական պետութեան համար, որովհետեւ *զիմմի*ական պայմանագրերի վրայ յենուող մահմեդական իրաւունքի տեսանկիւնից ընդունելի էր համարւում միայն նախքան արաբական նուաճումները կառուցուած եկեղեցիների նորոգումը: Այս իրողութիւնը կապւում է Իրան տեղափոխուած հայութեանը՝ նոր բնակավայրերին կապելու եւ շահ Աբբաս Ա.ի արտաքին քաղաքականութեան ուղղուածութեան հետ, որը նպատակ ունէր ամրացնել Իրանի կապերը եւրոպական երկրների հետ եւ արտօնում էր նաեւ կաթոլիկ առաքելութիւնների հաստատումն ու քարոզչութիւնը իր երկրի տարածքում: Հայկական վանքեր ու եկեղեցիներ են կառուցուել Իրանում նաեւ յետագայում: Մասնաւորապէս շահ Սեֆի Ա.ի 1042ի (1632/3) հրամանագրով հաստատւում էր հայերի իրենց բնակութեան վայրում եկեղեցիներ կառուցելու ու նորոգելու իրաւունքը[41]: Շահ Աբբաս Բ.ի օրօք եւս Ստեփանոս Երէցի հաւաստմամբ շահը «*թղթով ու արքունական կնիքով հրաման տուեց աներկիւղ ու ապահով կառուցելու վանքը*»[42]:

Այդուամենայնիւ, նոր հայկական վանքեր կառուցելու իրաւունքի մասին որեւէ նշում չկայ ՄՄ Սեֆեան շրջանի պարսկերէն հրովարտակներում եւ *ֆաթուա*ներում: Մահմեդական հոգեւորականութեան բարձրագոյն ատեանի կողմից ԺԷ. դարի երկրորդ կէսին հրապարակուած *ֆաթուա*ներում, մշտապէս շեշտւում է, որ թոյլատրւում է նորոգել այն հայկական վանքերը, որոնք կառուցուած են եղել նախքան արաբական նուաճումը: Ընդ որում այդ *ֆաթուա*ները հրապարակուել են ինչպէս որոշակի մի վանքի[43], այնպէս էլ ընդհանրապէս հայաբնակ մի քանի շրջանների՝ Սիւնիքի, Զուխուր Սա'ադի, Ղարաբաղի ու Ատրպատականի վանքերի վերանորոգումը թոյլատրելու խնդրով[44]:

Հայոց եկեղեցիների նորոգումը թոյլատրող Սեֆեան շահերի հրովարտակներում գրեթէ միշտ նշւում էր այդ առթիւ հրապարակուած *ֆաթուայի* մասին[45], իսկ շահի փոփոխութեան դէպքում յաճախ անհրաժեշտ էր լինում այդ մասին հրովարտակ ձեռք բերել նաեւ նոր շահից: Օրինակ Առա-

քել Բոբիկ Շոռոթցին Նախիջեւանի՝ Ագուլիսի, Շոռոթի ու Բիստի վանքերը նորոգելու համար հրովարտակներ է ձեռք բերել շահ Աբբաս Բ.ից (1664) եւ շահ Սուլէյմանից (1667), որոնցում նշւում է այդ առթիւ հրապարակուած *ֆաթուայ*ի, իսկ վերջինում՝ նաեւ նախորդ շահի հրովարտակի մասին[46]:

Յակոբ կաթողիկոսի ջանքերով ձեռքբերուած հրամանագրերում արտացոլուել է ԺԷ. դարի երկրորդ կէսում հայաբնակ շրջաններում շարունակուող լայնածաւալ եկեղեցական շինարարութիւնը, որ սկսուել էր դարասկզբին: Զաքարիա Քանաքեռցու վկայութեամբ շահ Աբբաս Բ.ը դէմ գնալով տեղի մահմեդական հոգեւորականութեան կամքին՝ յատուկ հրամանագրով հովանաւորում է Արդեբիլում հայկական հին եկեղեցու վերակառուցումը եւ կարգադրում տեղական կառավարիչներին՝ գործնական օժանդակութիւն ցուցաբերել այդ հարցում[47]: 1661ին հրապարակուած մէկ այլ հրովարտակով հրահանգւում է հայաբնակ շրջանների տեղական իշխանութիւններին ու մահմեդական հոգեւորականութեանը որեւէ կերպ չնեղել հայերին՝ նրանց եկեղեցիների աւելի բարձր կառուցուած լինելու ու վերանորոգման համար[48]: 1664-65ին, շահ Աբբաս Բ.ի թոյլտուութեամբ[49] ու տեղի կառավարիչ Միրզա Իպրահիմի յանձնարարութեամբ վերանորոգւում է Ագուլիսի Ս. Յովհաննէս եկեղեցին[50], 1669ին սկսում են կառուցել Խորվիրապի եկեղեցին, Մուղնու Ս. Գէորգ եկեղեցին[51]: 1679-85՝ վերանորոգւում է Ս. Թադէոս Առաքեալի վանքը[52], 1698ին՝ Ս. Գեղարդինը[53] եւն.: Մահմեդական իշխանութեան տակ ապրող հայութեան համար նման հրովարտակները անհրաժեշտ էին հայոց եկեղեցիների յետագայ ապահովութեան համար, որովհետեւ եթէ եկեղեցու վերանորոգումը ամրագրուած չէր հրովարտակով, ապա դա կարող էր հիմք դառնալ յետագայում մահմեդական պաշտօնեաների ու կառավարիչների չարաշահումների, անգամ՝ նրանց հնարաւոր աւերման համար: Խնդիրներ կարող էին ծագել նաեւ եկեղեցիների ընդարձակման ու կառուցուածքի փոփոխութեան դէպքում, ինչպէս վկայում է, մասնաւորապէս 1671ի մի փաստաթուղթ, ըստ որի Վերին Ագուլիսի մահմեդականները բողոք են ներկայացնում՝ պնդելով, թէ Ագուլիսի վանահայրը վանքի շուրջն ապօրինաբար բարձր պարիսպ ու այլ շինութիւններ է կառուցել: Տեղի հայերն իրենց հերթին նշում են, որ այդ պարիսպը վանքի վակֆային տարածքում է եւ վանքի հիւրերի եւ ուխտաւորների պաշտպանութեան համար է: Անցկացուած քննութեան արդիւնքում որոշւում է, որ քանի որ այդ շինութիւնները պաշտպանութեան համար են, եկեղեցու մաս չեն կազմում եւ դրանք ոչ ոքի չեն խանգարում, ուստի նրանց կառուցումը օրէնքին հակառակ չէ[54]:

ՀԱՅ *ԶԻՄՄԻ*ՆԵՐԻ ԿՐՕՆԱԿԱՆ ԱԶԱՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԵՒ ՊԱՇՏՊԱՆՈՒԱԾՈՒԹԻՒՆԸ ԲՌՆՈՒԹԻՒՆՆԵՐԻՑ

Պաշտօնապէս, Իրանում ԺԷ.-ԺԸ. դարերում հայ *զիմմի*ներին կրօնական ծէսերի ու արարողութիւնների կատարման հարցում տրուած էր լիա-

կատար ազատութիւն, որի մասին հաւաստում է Դաւրիժեցին. «*զամենայն կարգ եւ զաւանդութիւնս քրիստոնէական համարձակութեամբ կատարէին քրիստոնեայքն. զկոչնակ հարկանել, զժամ կանչել. եւ զջրօրհնէքն մեծախումբ հանդիսիւ առնել... Եւ զմեռեալսն խաչալամով եւ ձայնիւ շարականաւ հանեալ ի քաղաքէն անցուցանէին ընդ մէջ շուկային՝ եւ տանէին ի թաղել*»[55]: Եւրոպացի ուղեգիրները ականատես լինելով իրանահայութեան կրօնական արարողութիւնների ազատ կատարմանը՝ հաւաստում են դրանց նկատմամբ իրանցի իշխանաւորների հետաքրքրութեան ու շահի ներկայ գտնուելու մասին[56]:

Կրօնական ծէսերի ու արարողութիւնների ազատ կատարման իրաւունքը Յակոբ կաթողիկոսի ջանքերով ամրագրուել էր *դիւան ալ-սադարաթի* կողմից 1669ին հրապարակուած *միսալ*ով ու *ֆաթուայ*ով եւ հաստատուել շահ Սուլէյմանի հրամանագրերով[57]:

Քրիստոնէական օրէնքներով ապրելու իրաւունքը պաշտպանելու համար 1669ին շահ Սուլէյմանից հրամանագիր է ստանում նաեւ Աղուանից Պետրոս կաթողիկոսը[58]: Իրանի հոգեւորականութեան բարձրագոյն աստեանի կայացրած վճիռները արգելում էին նաեւ տարբեր շրջաններում բնակուող հայ *զիմմի*ներից իրենց իրաւունքներին համապատասխան վարուելու համար յաւելեալ գումարներ պահանջելն ու խոչընդոտելը[59], նրանց նկատմամբ բռնի ու անօրինական գործողութիւնները[60]:

ՍԵՓԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԻՐԱՒՈՒՆՔԸ

Պարսկերէն փաստաթղթերում գանձագին եւ ժառանգական հողատիրութիւնը արտայայտւում է *մուլք, մալիք, մալլաք* բառերով, որ նշանակում է սեփականութիւն, սեփականատէր: Այդ կարգի սեփականատիրութիւնը կոչւում էր *թամլիք*, որը աւելի շեշտուած անուանում էին *թասարրուֆ-է մալիքանէ* (تصرف مالكانه), որ նշանակում է «սեփականատիրական տիրակալում»[61]:

Սեֆեան ժամանակաշրջանում սեփականատիրական իրաւունքի հաստատման եւ նրա շուրջ ծագած վէճերի առթիւ տրուած շահական հրովարտակները հիմնականում հրապարակուել են ի հաստատումն *դիւան ալ-սադարաթի միսալի* եւ կամ շէյխ-ուլ-իսլամի կամ մուֆթիի *ֆաթուայ*ի:

Մահմեդական հոգեւորականութեան կողմից ԺԷ. դարի երկրորդ կէսին հրապարակած *ֆաթուա*ներից մի քանիսը հաստատում են հայ *զիմմի*ների սեփականատիրական իրաւունքներն իրենց կողմից գնուած կալուածքների եկամուտների ու հարկերի նկատմամբ:

Մասնաւորապէս, ըստ 1658ին հրապարակուած մի *ֆաթուայ*ի, հայ *զիմմի*ն իրաւունք ունէր տնօրինելու իր գնած *մուլք*ի եկամուտները, իսկ նախկին սեփականատիրոջ ժառանգները դրա նկատմամբ իրաւունքներ չունեն[62], նոյն թուականին հրապարակուած մէկ այլ *ֆաթուայ*ի համաձայն

զիմմին իրաւունք ունի գանձելու իրեն պատկանող *մազրաէի մալիքանէ* հարկը[63]:

Անձնական ժառանգական կամ գանձագին *մուլքերը* անառարկելի սեփականութիւն էին համարւում, որոնց *մալիքները* «*կարող էին տիրել ինչպէս սեփականատէրերը տիրում են իրենց սեփականութեանը կամ իրաւատէրերը իրենց իրաւունքներին եւ վարուել նրանց հետ, ինչպէս ցանկանան*»[64]: Որովհետեւ դա սեփականատիրութիւն էր, որը շար'իաթի[65] օրէնքներով կարելի էր տնօրինել, վաճառել, փոխանցել մէկ ուրիշի, նուիրել կամ *վակֆ* անել:

Մուլքային սեփականութիւնը շար'իաթի օրէնքներով պաշտպանուած էր ամէն տեսակի բռնազաւթումներից ու ոտնձգութիւններից եւ այդ իրաւունքը *շար'ի* օրէնքներով ապացուցելով՝ հնարաւոր էր խուսափել անօրինական իւրացումներից: Իսկ իւրաքանչիւր կալուածքի նկատմամբ իրաւունքները հնարաւոր էր ապացուցել *շար'իաթ*ական-նոտարական այլեւայլ փաստաթղթերով, որպիսիք էին առքուվաճառքի, կտակի, նուիրատուութեան եւ այլ կալուածագրերը (*ղաբալէ, վասիյյաթնամէ, մուսալեհենամէ* եւն.), նաեւ՝ դիւանական հարկային մատեաններից տրուած տեղեկանքները[66]:

Նշուած *ֆաթուա*ները ձեռքբերուած լինելով Յակոբ Ջուղայեցու հայրապետութեան տարիներին, բնականաբար նախատեսուած էին կալուածքների նկատմամբ նախ եւ առաջ Մայր Աթոռի ու Ամենայն Հայոց կաթողիկոսի իրաւունքները ապահովելու համար:

Այս *ֆաթուա*ները բովանդակում էին ընդհանուր ձեւակերպումներ իրաւունքների մասին, որոնցով հնարաւոր էր դառնում պաշտպանել *զիմմի*ի մասնաւոր սեփականութիւնը միայն այդպիսին լինելը ապացուցելուց յետոյ:

Չնայած *մուլքային* սեփականութեան շար'իաթական իրաւունքի առումով բաւական պաշտպանուած լինելուն, այնուամենայնիւ իրաւական տեսանկիւնից իր ամբողջութեամբ զիջում էր *վակֆ*ային ու *սուլի* (*մուսալեհէ*) գործարքով որպէս նուիրատուութիւն յանձնուած սեփականութեանը, քանի որ միայն այս տիպի գործարքով փոխանցուած սեփականութիւնն էր, որ պաշտպանուած էր նոր մահմեդականացած (*ջադիդ ալ-իսլամ*) ժառանգների յաւակնութիւններից:

Երբեմն տեղի ազդեցիկ պաշտօնեաների ոտնձգութիւններից պաշտպանուելու համար կաթողիկոսը հարկադրուած էր դիմել *դիւան ալ-սադարաթ*ին, իր ու Մայր Աթոռի իրաւունքները հաստատելու եւ շահի հրամանով դրանք պաշտպանելու համար, ինչպէս դա պատահում է Վաղարշապատ գիւղի նկատմամբ Երեւանի նախկին բէկլարբէկ Աբբաս Ղուլի խանի (1663–66) յաւակնութիւնների դէպքում: Պահպանուել է շահ Սուլէյմանի 1672ի հրամանագիրը՝ հրապարակուած ի հաստատումն *դիւան ալ-սադարաթ*ի Վաղարշապատ գիւղի Էջմիածնին պատկանելու վերաբեր-

եալ կայացրած *միսալի*[67]: Այդ ծաւալուն *միսալի* բովանդակութիւնից յայտնի է դառնում, որ Վաղարշապատ գիւղի նկատմամբ Էջմիածնի իրաւունքները ապացուցելու համար Յակոբ կաթողիկոսը *դիւան ալ-սադարաթի* քննութեանն է ներկայացրել մի շարք փաստաթղթեր, որոնց մէջ էին այդ գիւղի 1450ի *վակֆնամէն*, 1620ի Մովսէս կաթողիկոսի եւ 1662ին ու 1668ին իր կողմից ձեռքբերուած *միսալները*[68]: Էջմիածնի համար այդ կալուածքի պահպանութեան նպատակով ձեռքբերուած յիշեալ փաստաթուղթը նոյն շրջանում պատճէնուել է մի քանի օրինակով, նաեւ 1675ին վերահաստատուել նոր հրովարտակով[69]:

Յետագայում վերը նշուած իրաւական դրոյթներից շատերը անհրաժեշտութեան դէպքում վերահաստատւում էին շահական հրովարտակներով: Մասնաւորապէս, շահ Սուլթան Հուսէյնի 1712ի մէկ հրամանագրով վերահաստատւում են վեց *ֆաթուա*ներ բովանդակող հրովարտակներ[70]: Հրամանագրում հակիրճ նշւում է *ֆաթուա*ների բովանդակութիւնն ու նրանց հրապարակման ժամանակը:

ԺԱՌԱՆԳԱԿԱՆ ԻՐԱՒՈՒՆՔԻՆ ՎԵՐԱԲԵՐՈՂ ՇԻԱ ԻՍԼԱՄԻ ՕՐԷՆՔԸ

Թէ՛ Սեֆեան եւ թէ՛ յետագայ շրջանի իրանական իշխանութիւնները որքան էլ ընդհանուր առմամբ հանդուրժողական էին իրենց հպատակ այլակրօնների նկատմամբ, այնուամենայնիւ նրանց մահմեդականացումը Իրանում մշտապէս խրախուսուել է բռնի ու ոչ-բռնի, այլեւայլ մեթոդներով[71]:

Մուհամմադ մարգարէի անունից կնքուած պայմանագրերի ոգուն համահունչ շահ Սուլէյմանի 1669ի հրովարտակով հաստատուած *ֆաթուայով* արգելւում էր բռնի հաւատափոխութիւնը, մի երեւոյթ, որը ժամանակ առ ժամանակ կիրառւում էր մահմեդական իշխանութիւնների կողմից ինչպէս Իրան բռնագաղթուած հայութեան, այնպէս էլ Արեւելեան Հայաստանի հայ բնակչութեան հանդէպ:

Բացի այն, որ *զիմմի* համարուելն ինքնին ենթադրում էր որոշակի իրաւական անհաւասար կարգավիճակ այլակրօնի համար, ինչպէս նաեւ *ջիզիայի* կամ գլխահարկի եւ *թաֆաւութ-է ջիզիայի* կանոնաւոր վճարում[72], ժամանակ առ ժամանակ այլակրօնները ենթարկւում էին կրօնական հալածանքների եւ դառնում մահմեդականների մոլեռանդութեան ու անհանդուրժողութեան զոհը: Երբեմն էլ հաւատափոխութիւնը իրականացնելու համար գործի էին դրւում խոստումները, ինչպէս օրինակ շահ Սուլթան Հուսէյնի օրօք, երբ իւրաքանչիւր ամսուայ սկզբին շահի մունետիկն ազդարարում էր, թէ «*Նա, ով կ'ընդունի մեր՝ Մահմեդի կրօնը, ինչ խնդրանք, որ ունի, կը կատարուի անթերի*»[73]:

Ստեփաննոս Երէցի հաւաստմամբ, մահմեդականացած հայերը իրաւապէս աւելի պաշտպանուած էին, քանի որ նրանք կարող էին զրպարտել, թէ «*Այս այրը պարտք է ինձ այսքան դահեկան, ես չկարողացայ առնել, դրա համար էլ եկայ դէպի Ձեր կրօնը*», կամ «*Ձքաւորութեան պատճառով*

իմ որդին բազմաթիւ փարիներ ծառայեց այս մեծապունի մօտ, բայց նա չտուեց իմ որդու վարձը, դրա համար եկայ դէպի ձեր կրօնը» եւ այդ կերպ դրամ կորզել քրիստոնեաներից[74]:

Գործում էին նաեւ օրէնքներ, որոնք ուղղակի կամ անուղղակի նպաստում էին *զիմմի*ների մահմեդականացմանը[75]:

Բոլոր մահմեդական իրաւագիտական դպրոցների եւ ուղղութիւնների (*համբալի, շիա իմամական, շաֆի'ի, մալիքի ու զէյդիէ*) իրաւագէտներն ընդունում են *հադիս*ներում առկայ այն տեսակէտը, որ այլակրօնը չի կարող ժառանգել մահմեդականի ունեցուածքը[76]: Մինչդեռ այլակրօնից մահմեդականի ժառանգութիւն ստանալու իրաւունքը ժխտում են մահմեդական իրաւագիտական դպրոցներից ոչ-բոլորը[77]: Ժառանգութեան մասին շիա իմամական մահմեդականների շրջանում գործող օրէնքների համաձայն մահմեդականը կարող էր ժառանգել իր այլակրօն - անգամ հեռու - ազգականի ունեցուածքը՝ զրկելով այդ իրաւունքից աւելի մօտ ազգականներին[78]: Սեֆեան ժամանակաշրջանում, Իրանում շրջանառութեան մէջ է դրւում շիա իմամական իսլամի այս օրէնքը: Նոր մահմեդականացածների իրաւունքների մասին յիշատակութիւն կայ շահ Թահմասպ Ա.ի հիջրայի 952ի (1545) հրովարտակում, որտեղ սակայն նշւում է, որ հայերի մահմեդականացած ազգականները իրաւունքներ չեն կարող ունենալ *վակֆայի*ն կալուածքների նկատմամբ[79]:

Մատենադարանի պարսկերէն վաւերագրերից առաջինները, որ բովանդակում են այս օրէնքի գործադրութեան մասին փաստեր, գրուել են 1620ականների սկզբին[80] եւ կապւում են շահ Աբբաս Ա.ի անուան հետ: Վերջինս, չնայած քրիստոնեայ եւ հրեայ բնակչութեան հանդէպ վարած բաւական հանդուրժողական քաղաքականութեանը, ունէր բարեպաշտ մահմեդականի նկարագիր[81]: Շահ Աբբասի կողմից իրականացուած բռնագաղթերով մայրաքաղաք Սպահանում եւ յարակից բնակավայրերում քրիստոնեաների թիւը զգալիօրէն աճում է, որը չէր կարող չանհանգստացնել մահմեդական հոգեւորականութեանը եւ իշխանական օղակներին: Կարծում ենք հենց այս պատճառով ԺԷ. դարի սկզբից Իրանում նոր խթան է ստանում շիա իսլամում այս օրէնքի գործադրութիւնը, որն աւելի արդիւնաւէտ էր իսլամացման տեսանկիւնից, քան բռնի հաւատափոխութիւնը, քանի որ վերջինս, ինչպէս վերը նշուեց, իսլամի օրէնքներով ու Մուհամմադ մարգարէի անունից կնքուած պայմանագրերով արգելուած էր:

Այդ օրէնքի սկզբունքները, մասնաւորապէս, առկայ են շէյխ Բահա ալ-Դին Ամելիի (յայտնի է նաեւ շէյխ Բահայի անուամբ, մահ.՝ 1621ին) կողմից գրուած իսլամական իրաւագիտութեանը վերաբերող *Ջամէ'է Աբբասի* (Աբբասի ժողովածու) աշխատութեան մէջ, որտեղ նշւում է, որ «*մահմեդականը ժառանգում է անհաւատի ունեցուածքը եւ [նրա այդ իրաւունքը] անհաւատ [ժառանգի իրաւունքից] առաջնային է, հեռու լինի [նա], թէ*

մօտիկ»[82]: Վերոյիշեալ իրաւագէտը շահ Աբբասի օրօք Սպահանում բնակուելով դարձել էր շէյխ-ուլ-իսլամ եւ իր ժամանակաշրջանի առաւել ազդեցիկ շիա հոգեւորականն էր[83]: Չի բացառւում նաեւ, որ նա լինի այս օրէնքի շրջանառութեան մէջ դրուելու նախաձեռնողներից, որովհետեւ նրան է վերագրւում նաեւ շահ Աբբաս Ա.ի օրօք Սպահանի մօտակայ գիւղերի հայերի բռնի մահմեդականացման հրահրումը[84]:

Եւ քանի որ, ինչպէս վերն արդէն նշել ենք, մահմեդական իրաւագիտութեան մէջ ցանկացած օրէնքի հեղինակութիւնը վերագրւում էր Աստծուն, որն այն մարդկանց է փոխանցել Մուհամմադ մարգարէի եւ իմամների միջոցով, ուստի պատահական չէ, որ այն կապուել է նրանց անուան հետ: Հայ ուսումնասիրողներից Յ. Տէր Յովհաննեսեանցն այդ օրէնքը համարում է «սահմանադրեալ 'ի Մահմեդէ»[85], սակայն աւելի յաճախ այն կապւում է Իմամ Ջա'ֆարի անուան[86]: ԺԷ. դարի Բ. կէսին Իրան այցելած ճանապարհորդ Ժան դը Թեւենոյի հաւաստմամբ «*նա ով հաստատել է այս օրէնքը, հաւատացրել է, որ այն թոյլատրուած է եղել տասներկու իմամներից մէկի Ջա'ֆարի կողմից եւ Ջա'ֆարն էլ վստահեցրել է, որ իրեն այդ մասին յայտնել է Աստուած*»[87]: Շիաների վեցերորդ իմամ Ջա'ֆար Սադէղը իմամներից ամենահեղինակաւորն էր եւ մեծ դեր ունէր շիական ուսմունքի ու իրաւագիտութեան ձեւաւորման գործում: Նրան էին վերագրւում շիա ուսմունքին վերաբերող բազում արտայայտութիւններ ու գաղափարներ, նաեւ աղօթքներ ու քարոզներ[88]:

Շահ Աբբաս Ա.ի կողմից իր մահից (1629) քիչ առաջ հրապարակւում է մի հրամանագիր, ըստ որի «*իւրաքանչիւր քրիստոնեայ, որ մահմեդականութիւն էր ընդունում, իրաւունք էր ստանում ժառանգելու իր բոլոր ազգականների ունեցուածքը մինչեւ եօթ պորտ*»[89]: Այս հրամանագիրը փաստօրէն նոր ուժ էր հաղորդում այլակրօնների ժառանգական խնդիրներին վերաբերող այդ օրէնքին եւ փաստացի խրախուսում քրիստոնեաների մահմեդականացումը: Այս օրէնքի գործադրման եւ նրա ծանր հետեւանքների մասին մանրամասն տեղեկութիւններ է հաղորդում Դաւրիժեցին: Ըստ նրա, Իրան բռնագաղթուած հայերից ոմանք մահմեդականութիւն էին ընդունում, «*զի տան կաշառս Մահմեդականաց՝ եւ կացուցանեն սուտ վկայս, եւ քարշեն զքրիստոնեայս առ դատաւորս Մահմեդականս ի դատաստան, եւ պահանջեն ի քրիստոնէից զոր ինչ եւ հնարել կարեն*», պնդում, թէ՝ «*ազգական քո եմ, ամենայն ինչք եւ ստացուածք քո ինձ հասանի, տուր ինձ: եւ դատաւորքն ըստ անօրէն օրինաց իւրեանց իրաւացուցանեն զբանս ուրացողաց, թէ որովհետեւ նա եկեալ է յօրէնս Մահմեդի, նմա հասանին ամենայն ինչք իւրոց ազգականաց: Եւ այսպէս զրկեալ զողորմելի քրիստոնեայս՝ յափշտակեալ զամենայն ինչս եւ տան ուրացողացն*»[90]:

Այդ օրէնքը յետագայում եւս վերահաստատւում է շահ Աբբաս Բ.ի իշխանութեան (1642-66) շրջանում[91]՝ աւելի սաստկացնելով նրա ազդեցութիւնը քրիստոնեաների ժառանգութեան խնդիրներում:

Մեծ թուով պարսկերէն վաւերագրեր հաստատում են *դիւան ալ-սադարաթի* եւ Երեւանի, Նախիջեւանի ու այլ վայրերի *շար'ի* ատեանների *ֆաթուա*ներ՝ հրապարակուած հայերի ժառանգական խնդիրներում այս օրէնքի գործադրման կապակցութեամբ[92]: Վաւերագրերի տուեալները հնարաւորութիւն են տալիս նաեւ պարզելու, որ եթէ *զիմմի* ժառանգորդները եւս մահմեդականութիւն էին ընդունում նախքան ժառանգութեան բաժանումը, կարող էին վերականգնել իրենց ժառանգական իրաւունքը[93], այնուամենայնիւ «*եղբայրներից աւագը լինելով հանդերձ, աւելի ուշ մուսուլման դարձածը չէր կարող աւելի վաղ մուսուլման դարձած եղբօրից խլել ժառանգութեան իրաւունքը*»[94]:

Այս օրէնքի կիրառութիւնը բացայայտօրէն խրախուսում էր այլակրօնների մահմեդականացումը, որը լայն թափ է ստանում Իրան տեղափոխուած հայութեան շրջանում: Որոշ տուեալների համաձայն այդ հրամանագրի հրապարակումից 15 տարի անց աւելի քան 50,000 քրիստոնեայ էր մահմեդականացել՝ խուսափելու համար աղքատացումից եւ ունեզրկումից[95]: Մահմեդականացած հայերի կողմից բարձրացուած ժառանգութեան վէճերի մասին դէպքեր են նկարագրել հայ պատմիչները, մասնաւորապէս Ագուլեցին, որի վկայութեամբ նման վէճի պատճառով Ղարենց օյմաղին հասցուած վնասը գնահատում է 100 թուման[96]: Մահմեդականացած հայերի կողմից յաճախակի էին զրպարտութիւններն ու մատնութիւններն իրենց քրիստոնեայ ազգականների հանդէպ[97]:

Տնտեսական լծակների ազդեցութեամբ մահմեդականութիւն ընդունած հայերի թիւը փոքր չէր նաեւ Երեւանում[98]: Հայերի մահմեդականացումը ծանր դրութիւն էր ստեղծել նաեւ Արցախում ու Աղուանքում[99]: Մեծ թուով հայեր, «կամաւոր» մահմեդականութիւն են ընդունում ագահութիւնից դրդուած կամ էլ մահմեդական դարձած ազգականներից իրենց ժառանգութիւնը պաշտպանելու նպատակով: Ժառանգութեան պատճառով տեղի ունեցող հաւատափոխութեան դէպքերը յատկապէս շատ էին քաղաքաբնակ ունեւոր դասի ներկայացուցիչների՝ առեւտրականների ու արհեստաւորների շրջանում[100]: Տէր Յովհաննեսեանի դիտարկմամբ այդ օրէնքի ծանր հետեւանքները Իրանում սաստկանում են յատկապէս Սուլթան Հուսէյնի իշխանութեան տարիներին եւ այն շարունակում էր գործել մինչեւ հեղինակի ժամանակները[101]:

Հայ ունեւոր դասի ներկայացուցիչներից շատերն էլ չցանկանալով մահմեդականանալ, հեռանում էին Իրանից: Այդ մասին խօսուն վկայ է Աստուածատուր Համադանցի կաթողիկոսի կոնդակներից մէկը[102]:

Վաւերագրական նիւթերում ու այլ աղբիւրներում քիչ չեն նաեւ տեղեկութիւններն այն մասին, որ մահմեդականացած հայերը կամ պարզապէս մահմեդականներից ոմանք ջանացել են տէր դառնալ իրենց հետ որեւէ ազգակցական կապ չունեցող անձանց ժառանգութեանը[103]:

Իման Ջա'ֆարի օրէնքը հաւասարապէս կիրառում էր ինչպէս հայ առաքելականների, այնպէս էլ կաթոլիկ հայերի ժառանգութեան հարցերում: Կաթոլիկ հայրերի զեկուցումներում յստակ ուրուագծում են այս օրէնքի ծանր հետեւանքները Նախիջեւանի հայ կաթոլիկ գիւղերում տեղի ունեցող էթնոդաւանական գործընթացներում[104]: Պատահական չէ, որ այդ առթիւ իր բողոքն է ժամանակին արտայայտել Հռոմի Պապ Ալեքսանդր Է.ն շահ Աբբաս Բ.ին ուղղուած իր ուղերձում[105]:

Իրանահայերը ժառանգութեանը վերաբերող այս օրէնքը շրջանցելու համար ուղիներ որոնելիս կանգ չէին առնում սուտ երդում տալու առաջ: Ինչպէս հաւաստում է ֆրանսիացի միսիոնէր Գաբրիէլ դը Շինոնը «*Առաջինը չհաստատել տուեալ ծնողների ժառանգները լինելու փաստը, ինչն ապացուցելու համար դիւրութեամբ երդում են... վարդապետները նրանց վրայից հանում են բարոյական բոլոր պարտականութիւնները*»[106]: Միւս միջոցն էլ որոշակի երաշխիքի դիմաց իրենց ողջ ունեցուածքի «*փոխանցումն էր որեւէ վստահելի պարսիկի իրենց ընկերներից... որից որեւէ դաւանափոխ չի կարող ժառանգութեան ակնկալիք ունենալ*»[107]: Թերեւս նոյն միջոցի մասին է խօսում Ռաֆայէլ դիւ Մանը, նշելով, որ երբեմն հայերը գործարքի մէջ էին մտնում մահմեդական դատաւորների (*ղազի*) հետ՝ վաճառելով իրենց ունեցուածքը մէկ այլ անձի, որից յետոյ, վերջինս այն վերավաճառում էր հայի իսկական ժառանգին. մի եղանակ, որ թէեւ հիմնականում ազատում էր նոր մահմեդականացածի յաւակնութիւններից, սակայն ուղի էր հարթում դատաւորների կաշառակերութեան համար[108]:

1680ականներին Իրանում հաստատուած կաթոլիկ միսիոնէր Սանսոնի վկայութեամբ հարուստ հայը տեսնելով, որ իր ազգականներից մէկը մահմեդականութիւն է ընդունել եւ կարող է յաւակնել իր հարստութեանը՝ իր զաւակներից մէկին թլպատել է տալիս, այսինքն՝ մահմեդականացնում է, եւ նրան կտակում իր ողջ հարստութիւնը: Վերջինս ժառանգելով իր հօր ողջ ունեցուածքը, կարող էր իր կամքով բաժին տալ նաեւ իր եղբայրներին ու քոյրերին, ինչպէս, որ սովորաբար կատարւում էր, որից յետոյ նա հնարաւորութիւն ունէր վերադառնալու իր նախկին հաւատին՝ կաշառքով եւ պատճառաբանելով, որ չի կարողացել յարմարուել Մուհամմէդի օրէնքի պահանջներին ու կարգին, յարմարուել բոլոր մաքրութիւններին, կատարել աղօթքները, դիմանալ Ռամազանի ու Պահքի խստութիւններին[109]:

Առանձին դէպքերում իրենց ունեցուածքը մահմեդականացած հայերի յաւակնութիւններից պաշտպանելու համար հայ մեծահարուստները նաեւ այլ ուղիներ էին գտնում: Նման մի դէպք է նկարագրում պարսկահայ առեւտրական, հասարակական գործիչ Եղիա Կարնեցին (1689-1750/1): Ջուղայեցի Շիրիմանեանների Թաւրիզում գտնուող բաղնիքը նրանց մահմեդականացած ազգական Մեհրալիի ձեռքից կարելի է դառնում ազատել մի քանի մեծահարուստ ջուղայեցիների հետ կեղծ վկայագիր

կազմելով այն մասին, թէ իբր այդ բաղնիքը նրա վեքիլ Անդրէասի կողմից պարտքի դիմաց գրաւ է դրուած եղել պատրի Պիղատոսի մօտ[110]:

Բնականաբար, այդ օրէնքի գործադրումը չէր կարող չմտահոգել Հայ Եկեղեցու առաջնորդներին: Պատահական չէ, որ նրանք ջանում էին ձեռքբերել այդ օրէնքի դէմ, կամ նրա ուժը թուլացնող շահական հրամանագրեր: Սեֆեան Պետութեան անկման շրջանում Աստուածատուր Ա. Համադանցի եւ Աբրահամ Բ. Խոշաբեցի կաթողիկոսներին յաջողւում է շահ Թահմասպ Բ.ից (որի իշխանութիւնն աւելի շատ ձեւական բնոյթ էր կրում), այս հարցի վերաբերեալ ձեռքբերել հայ քրիստոնեաների շահերը պաշտպանող հրովարտակներ: Մասնաւորապէս, շահ Թահմասպ Բ.ի 1724ի հրամանագրով մի շարք դատական ու վարչական ատեաններում իրենց իրաւունքները հաստատելուց յետոյ միայն նոր մահմեդականացած հայերին իրաւունք էր տրւում յաւակնել իրենց ազգականների ունեցուածքին[111]: Այս հրամանագրի առնչութեամբ, Աստուածատուր Համադանցին հետեւեալն է նշում Նոր Ջուղայի Մովսէս վարդապետին ուղղած իր նամակում. «*ջաղիր իսլամի բանն գլուխ բռնեց. Ամսղուծոյվ մօտացս ըռաղամն գալոյ է. Յառաջ քան զռաղամի գալն տեղուս իշղողն հուքմ եւրուր որ այլ ջաղիր իսլամն դաւի չէ կարում անել, ով ոք որ անունն տալիս է զինքն բռնում է. Տեղոյս եւ Նախչուանայ քրիսղոնեայքն մեծ ուրախութեան միջի կան, Ամսղուծոյվ որ գլուխ գնայ, մեծ բարութիւն է հայոց ազգիս*»[112]:

Խոշաբեցուն յաջողւում է շահից 1731ին, նրա երեւանեան անյաջող արշաւանքի ընթացքում, ստանալ այդ օրէնքի կիրառութիւնը հայերի ժառանգութեան խնդիրներում արգելող հրովարտակ[113]: Թէեւ հրովարտակը զուրկ էր փաստացի ուժից, այնուամենայնիւ այն հիմք է դառնում յետագայում նման հրովարտակներ ձեռքբերելու: Այդ օրէնքի գործադրութիւնը արգելող հրամանագրեր են հրապարակուել 1735 եւ 1740ին Նադիր[114], 1748ին Իբրահիմ շահերի[115], 1825ին ղաջար թագաժառանգ Աբբաս Միրզայի, եւ 1848ին ղաջար Նասրէդդին շահի կողմից[116]:

Հայոց կաթողիկոսների ջանքերը իմամ Ջա'ֆարի օրէնքի ազդեցութիւնը չէզոքացնելու ուղղութեամբ որոշ չափով մեղմում են նրա ծանր հետեւանքները մահմեդական տիրապետութեան տակ գտնուող հայերի համար: Թէեւ փաստեր կան այդ օրէնքի կիրառման մասին նաեւ Երեւանի խանութեան շրջանում (ԺԸ. դարի երկրորդ-ԺԹ. դարի սկիզբ), բայց ինչպէս երեւում է պարսկերէն վաւերագրերի տուեալներից, դրանք հազուադէպ էին եւ երբեմն (ինչպէս օրինակ Երեւանի շար'ի դատարանի 1761ի որոշումի փաստաթղթում[117]) վէճը թեթեւ տուգանքներով լուծում էր յօգուտ քրիստոնեայ ժառանգի:

Յիշեալ օրէնքը Իրանում գործեց նաեւ ղաջարական ժամանակաշրջանում՝ շարունակելով նպաստել քրիստոնեաների մահմեդականացմանը եւ ձուլմանը: Այդ մասին հաւաստում է, մասնաւորապէս ԺԹ. դարի կէսին Նոր Ջուղա այցելած անգլիացի պաշտօնատար Բինինգը՝ վկայելով քա-

ղաքի հայութեան խեղճութեան ու փոքրաթիւ լինելու մասին[118]: Չնայած վերոյիշեալ հրամանագրերի հրապարակմանը, Իրանի բարձրաստիճան հոգեւորականութիւնը, որի ձեռքում էր քաղաքացիական շատ խնդիրների, այդ թւում նաեւ ժառանգական հարցերի քննութիւնը, շարունակում էր նշուած օրէնքի գործադրումը հայերի ժառանգութեան խնդիրներում[119]:

Ինչպէս երեւում է Տէր Յովհանեանի վկայութիւնից, Իմամ Ջա'ֆարի օրէնքն աւելի ազդեցիկ էր, քան Մուհամմադ մարգարէին վերագրուող հրովարտակ-պայմանագիրը, որով հայ հոգեւորականները փորձում են հակազդել ժառանգութեան այդ օրէնքին Նոր Ջուղայում[120]: Եւ քանի որ դատական իշխանութիւնն Իրանում գտնւում էր հոգեւորականների ձեռքում, հարցի կապակցութեամբ հրապարակուած հայերի համար նպաստաւոր շահական հրամանագրերը եւս, փաստօրէն, այդ խնդրին լուծում չէին տալիս:

Պարսկերէն վաւերագրական նիւթերը հաստատում են, որ մահմեդականացած ազգականների ոտնձգութիւններից պաշտպանուելու ուղիներից առաւել արդիւնաւէտ էր իսլամական օրէնքներին համապատասխան տարբերակներով դրանց որպէս նուիրատուութիւն ձեւակերպումը:

Շահ Աբբաս Բ.ի 1658ի հրամանագիրը հաստատում է, որ Էջմիածնին որպէս նուիրատուութիւն (*հոբբէ* هبه) յանձնուած գոյքը նրա տնօրինութեան տակ է գտնւում, եւ դրանք նուիրաբերած անձանց ժառանգները անկախ նրանից մահմեդականացած են թէ ոչ՝ չեն կարող ետ պահանջել[121]:

Նոր մահմեդականացած ժառանգների ոտնձգութիւններից մեծապէս պաշտպանուած էին եկեղեցական *վակֆ*ային կալուածքները, քանի որ դրանք համարւում էին անձեռնմխելի ու որեւէ կերպ օտարման ենթակայ չէին[122]: Մասնաւորապէս, Սեֆեան Պետութեան մահմեդական հոգեւորականութեան բարձրագոյն դատական ատեանի 1658 եւ 1684ի որոշումներում մերժւում են ժառանգների հայցերը՝ Էջմիածնին փոխանցուած *վակֆ*ային կալուածքների նկատմամբ[123]: Դեռեւս 1658ին Յակոբ կաթողիկոսի ջանքերով հրապարակւում է մահմեդական աստուածաբանների ու իրաւագէտների կայացրած վճիռը հաստատող շահ Աբբաս Բ.ի հրամանագիրը, ըստ որի՝ Էջմիածնին յանձնուած *վակֆ*երի հասոյթը նրա տնօրինութեան տակ է գտնւում, եւ նրա նկատմամբ նուիրատուների ժառանգները - քրիստոնեայ կամ նոր մահմեդականած - իրաւունքներ չունեն[124]: Էջմիածնի կողմից ԺԷ. դարում գնուած կալուածքներից շատերը ելնելով այս հանգամանքից՝ ձեւակերպւում են նաեւ որպէս նրա *վակֆ*ը այդ առթիւ գրուած *վակֆնամէ*ով[125]:

Ժառանգութեան մասին վերոյիշեալ օրէնքի վնասներից եւ ունեզրկումից իրենց ժառանգներին պաշտպանելու ուղիներից մէկն էլ, ըստ Նոր Ջուղայի ԺԹ. դարի պատմագիր-հետազօտող Տէր Յովհանեանցի, դրանք պարգեւագրով (*սոլինամէ* - صلح نامه, կամ *մուսալեհէ* - مصالحه) իր զաւակներին փոխանցելն էր, որից յետոյ «*ուրացեալ ընտրանին զկնի մահուանն նորա ոչ կարէ առնել զպահանջ ինչ*»[126]: Նման *սոլինամէ*ի կնքման մասին

նշում կայ ջուղահայ վաճառական Յովհաննէս Թոփչիի 1669ին գրած կտակում[127], որով թերեւս նա փորձել է ապահովել իր ունեցուածքը մահմեդականացած ազգականների ոտնձգութիւններից՝ այդ կերպ փոխանցելով այն իր կնոջը՝ Դաղքամին: Այս իրաւական ձեւակերպմամբ են ամրացուել նաեւ որոշ վանական կալուածքներ[128]:

Փաստօրէն, այս օրէնքից իրաւական կարգով պաշտպանուելու միակ ճանապարհը նուիրատուութիւնն էր, որը ձեւակերպւում էր *սոլինամէ*ի, *հոբբէնամէ*ի կամ *վակֆնամէ*ի միջոցով:

ԲՆԱԿԱՎԱՅՐԸ ՓՈԽԵԼՈՒՆ ՎԵՐԱԲԵՐՈՂ ՕՐԷՆՔԸ

Բացի *զիմմի*ների կարգավիճակին համապատասխանող իրաւունքներն ու պարտականութիւնները, իրանահպատակ հայութեան կեանքը կարգաւորում էին նաեւ Իրանի բոլոր *ռայաթ*ների համար ԺԷ.-ԺԹ. դարերում գործող որոշ օրէնքներ, որոնք իրենց արտացոլումն են գտել ՄՄ պարսկերէն վաւերագրերում:

Այդ օրէնքներից էր *ռայա*ների տեղաշարժման հարցերին վերաբերող օրէնքը: Թէեւ շահը կարող էր առանց որեւէ մէկի հետ հաշուի նստելու տեղափոխել իր հպատակներին երկրի մի շրջանից միւսը, կազմակերպել առանձին շրջանների բնակչութեան զանգուածային տարհանումներ ու բռնագաղթեր, այնուամենայնիւ որպէս կանոն, նստակեաց գիւղացիութիւնը ամրացուած էր իր բնակութեան վայրին ու նրա սեփականատէրերին: Նրանք ազատ տեղաշարժման իրաւունք չունէին եւ պարտաւոր էին տուեալ վայրում վարուցանք անել ու ապրել[129]:

Այնուամենայնիւ, ինչ-ինչ պատճառներով - մասնաւորապէս պատերազմների ժամանակ - գիւղացիները փախչում էին իրենց բնակավայրերից, եւ յաճախ որոշ ժամանակ անց վերադառնում, կամ հաստատւում նոր վայրում: Այս երեւոյթի մասին տեղեկութիւնները ցրուած են տարբեր աղբիւրներում, այդ թւում նաեւ պարսկերէն վաւերագրերում[130]: Նստակեաց հողագործների տեղափոխութեանը վերաբերող հարցերը եւս կարգաւորւում էին շահական հրովարտակներով:

Սուլթան Հուսէյնի հրովարտակներում[131] արձանագրուած կարգի համաձայն *ռայա*ները, որոնք 12 տարուանից աւելի էին բնակուել որեւէ վայրում, չպէտք է հեռացուէին այնտեղից եւ ընդհակառակը, եթէ 12 տարին դեռ չէր լրացել, ապա նրանց կարող էին վերադարձնել նախկին բնակավայրը: Հրովարտակներից մէկը հրապարակուել է 1698/9ին Սաւարի (Սվարանց) գիւղի բնակիչ քրիստոնեայ Աղամի խնդրանքով, որը նշում է, որ նախկինում բնակուել է Դարաբազ (Աղվերձ) գիւղում, իսկ այժմ բաւական ժամանակ է, ինչ Սաւարի գիւղում է՝ վճարելով այնտեղի *մալ* եւ *թաֆաւութ-է ջիզիա* հարկերը: Հրամանագրում նշւում է, որ եթէ 12 տարուց աւելի է, ինչ տեղափոխուել ու բնակւում է այլ վայրում՝ վճարելով այնտեղի հարկերը, ապա չպէտք է նրան նեղութիւն պատճառեն, եթէ՝ ոչ, ապա

պէտք է վերադառնայ իր նախկին բնակավայրը եւ այդ կապակցութեամբ հրահանգում է Ատրպատականի վեզիրին պարզել իրողութիւնը[132]: Միւս հրովարտակը, որ հրապարակուել է 1710ին, հրահանգում է Զուխուր Սա'-ադի կառավարչին Դարաշամբից Աստապատ գիւղը տեղափոխուած 15 հայ ընտանիքներին վերադարձնել իրենց նախկին բնակավայրը, որովհետեւ նրանց արտագաղթից յետոյ 12 տարի դեռեւս չէր անցել, եւ համաձայն իսլամի օրէնքների, միայն այդքան ժամանակ անցնելուց յետոյ արտագաղթողները իրաւունք ունեն մնալու իրենց նոր բնակութեան վայրում[133]:

Այսպիսով, պարսկերէն վաւերագրերի տուեալները հնարաւորութիւն են տալիս հանգամանալից քննել եւ լուսաբանել իրանական տիրապետութեան տակ ապրող հայութեան իրաւունքներն ու պարտաւորութիւնները, այդ իրաւունքների պաշտպանութեան ճանապարհները եւ միջոցները: Քննուող վաւերագրերի տուեալներն օգնում են պարզաբանումներ կատարել հայ *զիմմի*ների ունեցուածքի, կրօնական ազատութիւնների ու պաշտպանուածութեան, հայոց եկեղեցիների կառուցմանն ու վերանորոգման, *զիմմի*ների ժառանգական իրաւունքին վերաբերող շիա իսլամի օրէնքի մանրամասներում. որոշել նրա շրջանառութեան դրուելու ժամանակը, պատճառները, հայութեան համար կործանարար հետեւանքները եւ նրա դէմ Հայ Եկեղեցու առաջնորդների ձեռնարկած քայլերը: Հետազօտման արդիւնքում ակնյայտ է դառնում այն իրողութիւնը, որ չնայած իրանահպատակ հայութեանը տրուած զիմմիի կարգավիճակին ու նրանց իրաւունքների որոշակի պաշտպանուածութեանը, Սեֆեան տիրապետութեան շրջանում հայերի դրութիւնը մեծապէս կախուած էր նաեւ շահի անձնական վերաբերմունքից ու դիրքորոշումից, նաեւ երկրում մահմեդական հոգեւորականների դիրքից ու ազդեցութիւնից: Սեֆեան շահերի ձուլող եւ իսլամացնող քաղաքականութեան առաւել վառ դրսեւորումն էր շահ Աբբասի օրօք շրջանառութեան դրուած Իմամ Ջա'ֆարի օրէնքը, որի նպատակն էր Իրանի կենտրոնական նահանգները բռնագաղթի ենթարկուած հայութեանը ժամանակի ընթացքում իսլամացնելը, որին շատ արագ հետեւում էր հայկական ազգային դիմագծի կորուստը եւ ձուլումը այնտեղի մահմեդական բնակչութեան հետ:

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

---

[1] محمد جعفری هرندی، *فقها و حکومت*، تهران، 1379، էջ 15:

[2] Anver M. Emon, *Religious Pluralism and Islamic law: Dhimmīs and Others in the Empire of Law*, London, Oxford University Press, 2012, էջ 3-4:

[3] اسعد شیخ الاسلامی، *احکام وصیت و ارث ذمی از نظر فقهای اسلامی*، دانشکدهٔ الهیات نشریهٔ گروه تحقیقاتی، էջ 137:

[4] Որոշ տեղեկութիւնների համաձայն Իմամ Ալիի անունից տրուած պայմանագրերի հնագոյն օրինակը պահւում էր Սպահանի Չեհելսոթուն պալատում, որը կառուցուել է սեֆեան շահ Աբբաս Բ.ի կողմից (Լ. Գ. Մինասեան, *Երկու*

Հրովարտակ Մահամմադ Մարգարէից եւ Ալի Ամիրապետից, Սպահան, Ս. Ամենափրկիչ Վանքի տպարան, 1363 (1985), էջ 1-2: Այդ հրովարտակի բնագիրն ու պարսկերէն հրատարակութիւնը տե՛ս՝ 3-2 էջ ،1327 ،(عهدنامهٔ محمد پیغمبر ، اصفهان)

[5] Այս մասին մանրամասն տե՛ս՝ Քրիստինէ Կոստիկեան, Գ. Մկրտումեան, «Մուհամմատ Մարգարէի Ու Ալի Իբն Աբու Թալիբ Խալիֆայի Անունից Հայերի Հետ Կնքուած Դաշնագրերը Որպէս Պատմական Փաստաթղթեր», *Բանբեր Հայագիտութեան*, 2015:3(9), էջ 121-2, 127:

[6] Rudi Matthee, "Safavid Dynasty," *Encyclopaedia Iranica*, online edition, 2008, http://www.iranicaonline.org/articles/safavids :

[7] ՄՄ, արաբատառ ձեռ. ֆոնդ, Հ. 357:

[8] *Դիւան ալ-սադարաթ* (ديوان الصدارة) - Սեֆեան շրջանում կրօնական բարձրագոյն առաջնորդի՝ սադրի ատեանը:

[9] *Շարʼ* (شرع)- Մուսուլմանական գլխաւոր, կրօնական, հոգեւոր օրէնսդրական-դատական խորհուրդ, որին մասնակցում էին տուեալ վայրի բարձրաստիճան հոգեւորականները (Յակոբ Փափազեան, *Մատենադարանի Պարսկերէն Վաւերագրերը, I, Հրովարտակներ, Պրակ Ա.*, Երեւան, ՀՍՍՌ ԳԱ Հրատ., 1956, էջ 117):

[10] *Փիշքէշ* (پیشکش) - Զանազան առիթներով բնակչութեան կողմից աւատատէրին կամ պետական պաշտօնեաներին նուէրների անուան տակ հատուցուող տուրք, ինչպէս նաեւ ստորադաս պաշտօնեաների կողմից իրենց վերադասին, կամ խոշոր աւատատէրերի կողմից՝ շահին մատուցուող նուէր (Փափազեան, *Հրովարտակներ, Պրակ Ա.*, էջ 122):

[11] Մաղաքիա Արք. Օրմանեան, *Ազգապատում, Հտր. Բ.*, Ս. Էջմիածին, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Հրատ., 2001, էջ 2990:

[12] Նրա հայրը՝ Մոհամմատ Թաղի Մաջլէսին (Մոլլա Մոհամմատ Թաղի Իբն Մաղսուտ Ալի Իսֆահանի) եւս եղել է մահմեդական ազդեցիկ շիա *ուլամա*ներից (մահ. 1070 [1659/60]):

[13] *Շէյխ-ուլ-իսլամ* (شيخ الاسلام)- Այսպէս էր կոչւում տուեալ վայրի մուսուլմանների կրօնապետը: Իւրաքանչիւր խոշոր նահանգական-վարչական կենտրոն ունէր իր «շէյխ-ուլ-իսլամը», որը գլխաւորում էր «շարʼի» հոգեւոր դատական խորհուրդը: Խորհրդում քննուող զանազան հարցերի մասին շէյխ-ուլ-իսլամները տալիս էին վճիռներ՝ *ֆաթուա*ներ, որոնք օրէնքի ուժ ունէին եւ ենթակայ էին գործադրման՝ տուեալ նահանգի կամ շրջանի սահմաններում (Փափազեան, *Մատենադարանի Պարսկերէն Վաւերագրերը, I, Հրովարտակներ, Պրակ Բ.*, Երեւան, ՀՍՍՌ ԳԱ Հրատ., 1959, էջ 227):

[14] *Մոլլաբաշի* (ملاباشی) - Մահմեդական հոգեւորականութեան աստիճանասանդղակում բարձրագոյն պաշտօնն էր՝ ստեղծուած շահ Սուլթան Հուսէյնի իշխանութեան տարիներին: Վերջինս գիտնական աստուածաբանների ու աղքատների համար *վազիֆէ* խնդրելուց ու խեղճերին բռնութիւնից ազատելու համար միջնորդելուց, նաեւ աղօթքներ ուսուցանելուց բացի այլ գործի չէր միջամտում (2 էջ ،1332 ،(یکوشش محمد دبیر سیاقی، تذکره الملوک، تهران، کتابفروشی زوار):

[15] میراحمدی مریم، دین و دولت در عصر صفوی، تهران، نشریت امیر کبیر، 1369 ، 74: էջ

[16] Նոյն, էջ 61:

[17] H. Roemer, "The Safavid Period", edited by P. Jackson, *The Cambridge History of Iran*, vol. 6, Cambridge, Cambridge University Press, 2006, էջ 313:

[18] Նոյն:

[19] Ստեփանոս Երէց, *Պատմագիրք*, Թեհրան, Փերիոյ Կրթասիրաց Միութեան «Ալիք» տպ., 2017, էջ 152:

[20] میراحمدی مریم, էջ :60

[21] Ստեփանոս Երէց, էջ 155:

[22] سیوری راجر، *ایران عصر صفوی*، ترجمهٔ کامبیز عزیزی، تهران، نشر مرکز، 1372، էջ :250

[23] Roemer, էջ 313:

[24] Ջիզիան ոչ-մահմեդական ռայաներից գանձուող գլխահարկն էր: Ի սկզբանէ *ջիզիան* կարեւոր տեղ էր զբաղեցնում այլակրօնների իսլամացման ոչ-բռնի միջոցների մէջ եւ ամենայն հաւանականութեամբ ծագում էր պահլաւերէն «*gazītak*» բառից, որը Սասանեան Պարսկաստանում ցածր խաւից գանձուող հարկի անուանումն էր: Տեսականօրէն *ջիզիա* պէտք է վճարէին ազատ, չափահաս տղամարդիկ (այդ հարկից ազատուած էին կանայք, ծերերը, երեխաները, ստրուկները, մուրացկաններն ու հաշմանդամները):

[25] Փափազեան, *Հրովարտակներ, Պրակ Ա.*, էջ 118:

[26] Vera B. Moreen, "Jizya," *Encyclopaedia Iranica, vol. XIV*, Fasc. 6, էջ 643-645, http://www.iranicaonline.org/articles/jezya :

[27] *Tadhkirat Al-Mulūk: A Manual of Safavid Administration*, V. Minorsky, Cambridge, Pub. by Luzac & Co., 1943, էջ 179:

[28] *Զաքարիա Ագուլեցու Օրագրութիւնը*, Երեւան, Արմֆանի Հրատ., 1938, էջ 68:

[29] Այս մասին վկայում է Ռաֆայէլ դիւ Մանը (Raphael Du Mans, *L'estat de la Perse en 1660*, E. Leroux, Փարիզ, 1890, էջ 46):

[30] V. Ghougassian, *The Emergence of the Armenian Diocese of New Julfa in the 17th Century*, Facsimile of Doctoral Dissertation, Columbia University, A Bell and Howell Company, 1995, էջ 78. նաեւ՝ Du Mans, էջ 46:

[31] تاجبخش ا.، *تاریخ صفویه، شیراز*, انتشارات نوید، 1373, էջ :315

[32] Այդ մասին տե՛ս՝ И. В. Зайцев, К. П. Костикян, "Указ Сефевидского Шаха Сулеймана Еврейской Общине Гиляна из Собрания Государственной Публичной Исторической Библиотеки в Москве" (Մոսկուայի Հանրային Պատմական Գրադարանի հաւաքածուի սեֆեան շահ Սուլէյմանի հրովարտակը՝ տրուած հրէական համայնքին) *Ирано-славика*, 2010:2(22), էջ 48-49:

[33] Քրիստինէ Կոստիկեան, *Մատենադարանի Պարսկերէն Հրովարտակները, Պրակ Գ.*, Երեւան, «Զանգակ-97», 2005, վաւ. 6:

[34] Նոյն, վաւ. 21, 35:

[35] Նոյն, վաւ. 35:

[36] Նոյն, վաւ. 21:

[37] Այս մասին տե՛ս՝ А. Д. Папазян, *Аграрные Отношения в Восточной Армении в XVI- XVII Веках*, (Հողային յարաբերութիւնները Արեւելեան Հայաստանում *ԺԶ.-ԺԷ. դարերում*) Երեւան, Հայկ. ՍՍՀ ԳԱ Հրատ., 1972, էջ 234:

[38] Փափազեան, *Հրովարտակներ, Պրակ Ա.*, էջ 109:

[39] Папазян, էջ 234-5:

[40] Առաքել Դաւրիժեցի, *Գիրք Պատմութեանց*, աշխ.՝ Լ. Ա. Խանլարեան, Երեւան, ՀԽՍՀ ԳԱ Հրատ., 1990, էջ 94:

[41] هاشمی ، شکوه السادات اعرابی، *ارامنهٔ جلفای نو در عصر صفوی*، تهران، 1394، էջ 85-284:

[42] Ստեփանոս Երէց, էջ 150:

[43] Ինչպէս, օրինակ, Մուղնիի Ս. Գէորգ վանքի, Ներքին Ագուլիսի Ս. Թովմա Առաքեալի, Շատիկի Հարանց Անապատի վանքի վերանորոգման համար ձեռք բերուած *ֆաթուաները* (Կոստիկեան, *Հրովարտակներ, Պրակ Գ.*, վաւ. 19, 20, 29):

[44] Նոյն, վաւ. 32, 35:

[45] Նոյն, վաւ. 15:

[46] ՄՄ, կաթող. դիւան, թղթ. 1բ, վաւ. 129:

[47] Զաքարիա Քանաքեռցի, *Պատմութիւն, Կոնդակ Սուրբ Ուխտին Յոհաննու Վանից*, աշխ.՝ Ա. Վիրաբեան, Երեւան, Հեղինակային Հրատ., 2015, էջ 109-111:

[48] Կոստիկեան, *Հրովարտակներ, Պրակ Գ.*, վաւ. 11:

[49] Նոյն, վաւ. 15:

[50] *Զաքարիա Ագուլեցու Օրագրութիւնը*, էջ 65:

[51] Նոյն, էջ 83, տե՛ս նաեւ՝ Կոստիկեան, *Հրովարտակներ, Պրակ Գ.*, վաւ. 19:

[52] Վազգէն Յակոբեան, *Մանր ժամանակագրութիւններ XIII-XVIII դդ., Հտր. Ա.*, Երեւան, ՀՍՍՌ ԳԱ Հրատ., 1951, էջ 310:

[53] Նոյն, էջ 395:

[54] Ք. Կոստիկեան, Մ. Խեչո, *Մատենադարանի Պարսկերէն Վաւերագրերը, III, Շարիաթական-Նոտարական Փաստաթղթեր (ԺԷ-ԺԹ դարեր)*, Երեւան, ՀՍՍՀ «Գիտութիւն» Հրատ., 2018, վաւ. 16:

[55] Դաւրիժեցի, էջ 94:

[56] Էլիզաբէթ Թաջիրեան, *Նոր Ջուղան Եւրոպական Աղբիւրներում 17-18 Դարերում, Մաս Բ.*, Երեւան, Պատմ. Ինստ. Հրատ., 2017, էջ 20-3, 54, 135-6, 143-4, 156:

[57] Կոստիկեան, *Հրովարտակներ, Պրակ Գ.*, վաւ. 31, 34:

[58] Նոյն, վաւ. 37:

[59] Նոյն, վաւ. 28:

[60] Նոյն, վաւ. 31, 37:

[61] Յակոբ Փափազեան, «Շարիաթական Իրաւական Նորմերը եւ Հողի Ֆէոդալական Սեփականութեան Հարցը Արեւելքում», *Լրաբեր Հասարակական Գիտութիւնների*, 1966:12(283), էջ 23:

[62] Կոստիկեան, *Հրովարտակներ, Պրակ Գ.*, վաւ. 4:

[63] Նոյն, վաւ. 7:

[64] Փափազեան, «Շարիաթական», էջ 31-32:

[65] *Շարի՛աթ* (شريعت) - Մուսուլմանական կրօնական օրէնքներ, հաստատուած նորմեր, որոնցով առաջնորդւում էր հոգեւորականների բարձրագոյն կրօնական-դատական ատեանը: Այս հաստատութիւնը յաճախ անուանւում էր հենց այդ օրէնքների անունով, սակայն սովորաբար կոչւում էր «շար՛»: Շարի՛աթի կամ շար՛ի հոգեւոր ատեաններում էին քննւում մեծ մասամբ տնտեսական հարցերի շուրջը քաղաքացիների միջեւ առաջացած վէճերը (Փափազեան, *Հրովարտակներ, Պրակ Բ.*, էջ 227):

[66] Փափազեան, «Շարիաթական», էջ 30:

[67] ՄՄ, Կաթող. Դիւան, թղթ. 1բ, 156ա: Այդ վաւերագիրը տե՛ս՝ Կոստիկեան, *Հրովարտակներ, Պրակ Գ.*, վաւ. 38:

[68] Նոյն, վաւ. 38, էջ 93-95:

[69] ՄՄ, Կաթող. Դիւան, թղթ. 1բ, վաւերագիր 163:

[70] Կոստիկեան, *Հրովարտակներ, Պրակ Գ.*, վաւ. 79:

[71] Յակոբ Փափազեան, «Սեֆեան Իրանի Ասիմիլեատորական Քաղաքականութեան Հարցի Շուրջը», *Բանբեր Մատենադարանի*, 1956:3, էջ 85-6:

[72] Նոյն, էջ 87:

[73] Ստեփանոս Երէց, էջ 152:

[74] Նոյն:

[75] Օսմանեան Կայսրութիւնում գործող այդ կարգի օրէնքներից մէկը վերաբերում էր հայ արհեստաւորների անդամակցութեանը թուրքական արհեստաւորական միաւորումներին, որի համար «*ենթարկւում էին իսլամական սահմանուած ծիսակատարութիւններին եւ այդ միջոցով*» մահմեդականութիւն ընդունելու հարկադրանքին (Յակոբ Անասեան, «Թուրքական Ֆութուուաթը եւ Հայերը», *Մանր Երկեր*, Լոս Անճելըս, Հրատ.՝ Ամերիկահայ Միջազգային Քոլէճի, 1988, էջ 583):

[76] اسعد شیخ الاسلامی، احکام وصیت و ارث ذمی از نظر فقهای اسلامی، էջ 164:

[77] Նոյն, էջ 166:

[78] Նոյն, էջ 167-68:

[79] Այս հրովարտակը պահւում է Նոր Ջուղայի Ս. Ամենափրկիչ վանքի թանգարանում, նրա բնագիրը տե՛ս՝ هاشمی، էջ 167-68:

[80] Փափազեան, *Հրովարտակներ, Պրակ Բ.*, վաւ. 16:

[81] Յատկանշական են նրա հետիոտն ուխտագնացութիւնը Մեշհէդ, ուզբէկների յարձակումների հետեւանքով աւերուած 8րդ իմամ Ռեզայի դամբարանի վերանորոգումը եւ նրա յաճախակի այցելութիւնները շիական ուխտավայրերը Արդեբիլում, Մեշհէդում, Քարբալայում եւ Նաջաֆում: Բացի այդ, նա իրեն շարունակում էր համարել սեֆեան միաբանութեան առաջնորդ, որը սերում էր Ալիի տոհմից, նաեւ սերտ կապ էր պահպանում մահմեդական յայտնի աստուածաբանների հետ (*The Cambridge History of Iran, vol. 6*, էջ 272-3):

[82] بها الدین محمد بن حسین عاملی، جامع عباسی، سنه 1331، էջ 264:

[83] Այս մասին մանրամասն տե՛ս՝ Roemer, էջ 667:

[84] R. Matthee, *Persia in Crisis, Safavid Decline and the Fall of Isfahan*, I.B. Tauris, London, New York, 2011 էջ 180-1:

[85] Յ. Տէր Յովհաննեանց, *Պատմութիւն Նոր Ջուղայու Որ յԱսպահան, Հտր. Ա.*, Նոր Ջուղա, Տպ. Ամենափրկչեան Ս. Վանաց, 1880, էջ 205:

[86] Du Mans, էջ 46-7. նաեւ՝ Փափազեան, «Սեֆեան», էջ 87-8:

[87] Թաջիրեան, *Մաս Բ*, էջ 114:

[88] M.G.S. Hodgson, "Djafar al-Sadiq," *The Encyclopædia of Islam*, second ed., vol. 2, Leiden, E.J. Brill, 1968, էջ 375: Մեզ յայտնի չէ այդ իմամի հեղինակած կամ նրան վերագրուող որեւէ աշխատութիւն, որտեղ այդ օրէնքը կամ նրա մասին նշուած է:

[89] Այս հրամանագրի մասին տե՛ս՝ *A Chronicle of the Carmelites in Persia and the Papal Mission of the 17th and 18th Centuries, vol. I, II*, London, Eyre & Spottiswoode, 1939, էջ 288:

[90] Դաւրիժեցի, էջ 95-6:

[91] *A Chronicle of the Carmelites in Persia, vol. I*, էջ 366:

[92] Փափազեան, «Սեֆեան», էջ 88:

[93] Նոյն, էջ 91:

[94] Փափազեան, *Հրովարտակներ, Պրակ Բ.*, վաւ. 16, էջ 102:
[95] *A Chronicle of the Carmelites in Persia, vol. 1*, էջ 288:
[96] *Զաքարիա Ագուլեցու Օրագրութիւնը*, էջ 146:
[97] Տէր Յովհանեանց, *Հպր. Ա.*, էջ 204:
[98] Մ. Կարապետեան, «Բնակչութեան Էթնիկ Կազմը Երեւանում 1724–1800 Թուականներին», *Պատմաբանասիրական Հանդէս*, 1987:3(118), Երեւան, էջ 101:
[99] Եսայի Հասան Ջալալեանց, *Պատմութիւն Համառօտ Աղուանից Երկրի*, Երուսաղէմ, տպարան Ս. Յակովբեանց, 1868, էջ 18:
[100] Փափազեան, «Սեֆեան», էջ 92:
[101] Տէր-Յովհանեանց, *Հպր. Ա.*, էջ 366:
[102] Մ. Կարապետեան, «Իման Ջաֆարի Օրէնքը եւ Արեւելահայերը», *Պատմաբանասիրական Հանդէս*, 198:1, էջ 220:
[103] Կոստիկեան, *Հրովարտակներ, Պրակ Գ.*, վաւ. 18: Նման մի դէպք է նկարագրում Քանաքեռցին (Զաքարիա Քանաքեռցի, էջ 78-9):
[104] Մ. Կարապետեան, «Հայ Կաթողիկէ Թեմը եւ Էթնօդաւանական Գործընթացները Նախիջեւանում XVII-XVIII Դարերում»՝ Հ. Սահակ Ճեմճեմեան, *Նախիջեւանի Հայոց Վարժարանը եւ Հոմը*, Վենետիկ Ս. Ղազար, 2000, էջ 8-10:
[105] *A Chronicle of the Carmelites in Persia, vol. 1*, էջ 366:
[106] Թաջիրեան, *Մաս Բ*, էջ 69:
[107] Նոյն:
[108] Raphael Du Mans, էջ 47:
[109] Նոյն, էջ 170-1:
[110] Եղիա Կարնեցի, *Դիւան*, աշխ.՝ Ա. Գ. Աբրահամեան, Երեւան, «Միտք» Հրատ., 1968, էջ 292-3:
[111] Կոստիկեան, *Հրովարտակներ, Պրակ Գ.*, վաւ. 86:
[112] *Դիւան Նոր Ջուղայի Ս. Ամենափրկիչ Վանքի, Մաս Բ., Էջմիածնի Կաթողիկոսներու Կոնդակներ*, աշխ.՝ Վարուժան Արք. Հերկելեան, Սպահան, Պոմեգրաւիուր տպ., 2015, էջ 86:
[113] Կոստիկեան, *Հրովարտակներ, Պրակ Գ.*, վաւ. 89:
[114] Աբրահամ Կրետացի, *Պատմութիւն*, քնն. բնագիր, ռուս. թարգ., առաջ. թարգմ.՝ Ն. Կ. Ղորղանեան, Երեւան, ՀՍՍՀ ԳԱ Հրատ., 1973, էջ 52:
[115] Քրիստինէ Կոստիկեան, *Հրովարտակներ, Պրակ Դ*, Երեւան, Նայիրի Հրատ., 2008, վաւ. 28:
[116] ՄՄ, Կաթողիկոս. Դիւան, թղթ. 4, վաւ. 144, վաւ. 51:
[117] ՄՄ, Կաթողիկոս. Դիւան, թղթ. 1գ, վաւ. 437:
[118] R. Binning, *A Journal of Two Years' Travel in Persia, Ceylon, etc., vol. II*, London, 1857, էջ 80:
[119] Տէր Յովհանեանց, էջ 209:
[120] Նոյն, էջ 453:
[121] Տե՛ս այդ հրովարտակը հրատարակուած Քրիստինէ Կոստիկեան, Հ. Գէորգեան, «Սեֆեան Շահերի Նորայայտ Հրովարտակները Մատենադարանի Կաթողիկոսական Դիւանում», *Բանբեր Մատենադարանի*, 2018:26, էջ 70-71:
[122] Փափազեան, *Հրովարտակներ, Պրակ Ա.*, էջ 120:

[123] ՄՄ, Կաթողիկոս. Դիւան, թղթ. 1է, վաւ. 1068, թղթ. 1բ, վաւ. 181 (այդ վաւերագիրը տե՛ս նաեւ՝ Կոստիկեան, *Հրովարտակներ, Պրակ Գ.*, վաւ. 51):

[124] ՄՄ, Կաթողիկոս. դիւան, թղթ. 1է, վաւ. 1068:

[125] Կոստիկեան, Խեչո, վաւ. 4, 6, 10, 12, 17:

[126] Տէր Յովհաննեանց, էջ 209:

[127] ՄՄ, Կաթողիկոս. դիւան, թղթ. 4, վաւ. 25:

[128] Կոստիկեան, Խեչո, վաւ. 3, 11:

[129] فلور و.، تاریخچهٔ مالی – مالیاتی ایران صفویه تا پایان قاجاریه، էջ 25:

[130] Կոստիկեան, *Հրովարտակներ, Պրակ Դ.*, վաւ. 4, էջ 28:

[131] ՄՄ, կաթողիկոս. դիւան, թղթ. 1է, վաւ. 1110; թղթ. 1գ, վաւ. 234 (այս վաւերագիրը տե՛ս նաեւ՝ Կոստիկեան, *Հրովարտակներ, Պրակ Գ.*, վաւ. 72): Այս հարցի մասին մանրամասն տե՛ս նաեւ՝ Папазян, էջ 210-4:

[132] ՄՄ, Կաթողիկոս. դիւան, թղթ. 1է, վաւ. 1110:

[133] Կոստիկեան, *Հրովարտակներ, Պրակ Գ.*, վաւ. 72:

THE SHAR'IYYAH LAWS REGULATING THE LIFE OF ARMENIAN SUBJECTS IN THE SAFAVID STATE IN THE 17TH-18TH CENTURIES

Summary

KRISTINE KOSTIKYAN
kkostikyan@yahoo.com

The Armenian subjects of the Safavid state who lived in the regions of Eastern Armenia as well as those who had settled in Isfahan and its vicinity were granted *dhimmi* status. This status was based on pacts concluded by Arab conquerors with high-ranking Armenian clerics in conformity with the *aqd al-dhimma* concluded by the Prophet Muhammad with the non-Muslim communities of the Arab Peninsula. The initial entitlement and duties, however, were modified and detailed in time due to new circumstances and nuances and were fixed in the decrees obtained by the Armenian catholicoi from the Safavid shahs and high Muslim clerics.

Based on the Mesrob Mashdots Old Manuscripts Institute's (Madenataran's) archival collection of such Persian documents, the article explores the rights and duties of Armenian *dhimmis* in Safavid Iran between the 17th and 18th centuries, specifically focusing on practices of inheritance, ownership and taxing, which elucidate certain aspects of the socio-economic state of the Armenians under Safavid rule.